

Չարց Որո՞նք են խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի հիմնական չափանիշները:

Պատասխան Խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի հիմնական չափանիշներն են՝

1. Ջրամատակարարման հաստատված գրաֆիկների և տևողության պահպանումը,
2. Սահմանազատման կետերում (մուտքագծերի վրա) ջրի ճնշման տեխնիկական կանոնակարգերով սահմանված մեծությունների ապահովումը,
3. Ջրամատակարարման համակարգում պլանային աշխատանքները սկսելու վերաբերյալ սահմանված ժամկետներում տեղեկատվության տրամադրումը սպառողներին,
4. Ջրամատակարարման համակարգում պլանային աշխատանքների դեպքում՝ ջրամատակարարման ընդհատման առավելագույն տևողությունը,
5. Ջրամատակարարման համակարգում վթարների հետևանքով ջրամատակարարման ընդհատումների առավելագույն տևողությունը,
6. Ջրամատակարարման համակարգում վթարների դեպքում ջրամատակարարման վերականգնման ժամկետի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը սպառողներին,
7. Սպառողների դիմում-բողոքներին արձագանքման տևողությունը,
8. Ջրամատակարարման վերաբերյալ սպառողներից տեղեկատվություն ստանալու և հաղորդելու համար շուրջօրյա հեռախոսակապի առկայությունը: